

United Prayer

Issued by the Executive Committee of the
CONSTANTINOPLE CHRISTIAN WORKERS' UNION.
Headquarters: Bible House, Stamboul, Constantinople.

JUNE, 1922

“THAT THEY ALL MAY BE ONE”

THIS number of UNITED PRAYER is published in Armenian in recognition of the fact that there are many Armenian-speaking Christian friends not familiar with the English language whose interest in the ideals and purposes of the Constantinople Christian Workers' Union is deep and genuine. Fellowship in Christ and in Christian service surmounts barriers of many kinds. One great stimulus to faith and optimism in Constantinople is the steady discovery of those who in spite of differences in language and nationality cherish the highest Christian ideals of human welfare and spiritual progress and earnestly desire to do their part in fulfilling the purpose of Christian society.

ԱՂՕԹԻ ՆԻԻԹՅՐ

1. ԱՂՕԹԻ: Կ. Պոլսոյ Նոր Աստուածաբանական Վարժարանին (School of Religion) համար, որ պիտի բացուի յառաջիկայ Սեպտեմբերին որպէս զի ան լոյսի, հաւատքի, մարգարէութեան եւ ճշմարիտ Գրիտոնէութեան հոգին ներշնչող կեդրոն մը ըլլայ: Որպէս զի ան մեծ դեր մը խաղայ այս երկրին քանդուած եկեղեցիներուն վերաշինութեան գործին մէջ:
2. ԱՂՕԹԻ: որ մենք, վերջին մեծ աղէտներէն ողջ ելլողներս, համբերութեամբ, հեռատեսութեամբ, հաւատքով, եւ Սբ. Հոգիի կրակովը վառուած շարունակներ կրօնական եւ կրթական այն մեծ գործը որ մեր նահատակուած նախնիքները մեզի աւանդեցին:
3. ԱՂՕԹԻ: այն բոլոր իշխաններու, քաղաքական եւ զինուորական անձնաւորութիւններու համար, որոնք այս երկրին ու անոր մէջ բնակող տարբեր ազգութիւններուն ճակատագիրը որոշելու համար կը խորհին ու կը գործեն. աղօթէ որ անոնք այնպիսի որոշումներ տան ու գործադրեն որ դարբերէ ի վեր իրարու դէմ ատելութեամբ լեցուած տարբեր իրարու մօտեցնեն եւ զանոնք բարի դրացութեան փոխադարձ սիրովը լեցնեն:
4. ԱՂՕԹԻ: որ այս օրերս բոլոր երկիրներու դպրոցներէն ելլող ընթացաւարտները գործի աշխարհը իրենց հետը բերեն ճշմարիտ դաստիարակութեան բարի պատուները, լրջութիւն, պարկեշտութիւն, զոհողութիւն, հաւատք, անկեղծութիւն և այլն:
5. ԱՂՕԹԻ: որ մենք մեր յոյսերը, մեր եւ աշխարհի փրկութեան համար, տեսանելիներէն աւելի անտեսանելի ուժելու վրայ դնենք:

ՖՐԷՏ Պ . ՍՄԻԹՆԻ Կ . ՊՈՒԽՍ ԱՅՅԵԼՈՒԹԻԻՆԸ

Եթէ երբեք իր աւետարանը ճիշտ ժամանակին ու բազմակարօտ և ուշադրաւ չըջանակի մը մէջ քարոզելու համար եկող պատգամաբեր մը եղած է, ան ալ Ֆրէտ Պ . Սմիթն է, որ ներկայ տարուան Ապրիլին այցելեց Պուխս: Անոր այս քաղաքը տուած այցելութիւնը տարբեր կեդրոններու և հասարակութեանց համար ներշնչման պատճառ մը եղած է: Հետեւաբար այս հիանալի Քրիստոնեայ աշխարհական քարոզիչը մտիկ ընելու առանձնաշնորհն ունեցողներ անոր բերած պատգամը կարելի եղածին չափ լայն չըջանակի մէջ տարածելու բարոյական պատասխանատուութիւն մը ունին, այնպէս որ այդ պատգամին ազդեցութիւնը կատարելապէս զգացուի Պուսոյ կեանքին մէջ:

Անցեալ աշնան Մր . Սմիթ, որ Նիւ Եորքի ճանդ Մէնսլիլ Ընկերութեան առետրական մեծ հաստատութեան մէկ անդամն է, Միաց. Նահանգներէ մեկնեցաւ աշխարհի չըջանը ընելու ի դիմաց Եկեղեցիներու Համաշխարհային Դաշնակցութեան: Ան գնաց իրրեւ պատգամատար մը Միջազգային Բարեկամութեան և Բարեացակամութեան: Մր . Սմիթ և անոր այս կարեւոր չըջանին համար պատասխանատու եղողներ ազօթքով կը յուսան թէ միջազգային խաղաղութեան դատը ասով պիտի զօրանայ, թէ բոլոր երկիրներու Քրիստոնեայ առաջնորդողները պիտի օգտուին ու սրտապնդուին՝ ըմբռնելով այն նշանակալից պատեհութիւնը որ այժմ կայ Քրիստոնեայ Եկեղեցիին ներկայ սերունդին առջև, և թէ այն պատեհութեան ու պատասխանատուութեան նոր մէկ վերագնահատումով Քրիստոնեայ Եկեղեցիին տարբեր ճիւղերը ճշմարտապէս պիտի միանան և պիտի առաջնորդուին զարգացնելու կարելի այն ամէն միջոցները որոնցմով կարելի է համազործակցութիւն մշակել: Ահա այս կերպով Մր . Սմիթի այցը ոսկեղէն առիթ մը ընծայեց Պուսոյ Քրիստոնեայ դործիչներուն և օգնեց անոնց որ աւելի զօրաւորապէս զարգացնեն հիմնական միութեան այն դիտակցութիւնը որ կայ իրենց մէջ:

Երկու յետմիջօրէններ ժամը Յին Քրիստոնեայ Դործիչներու Միութեան մասնաւոր ժողովներ գումարուեցան Ե . Ք . Ընկերակցութեան սրահին մէջ, Բերա: Երեքշաբթի յետմիջօրէին Մր . Սմիթ խօսեցաւ այն բացարձակ պէտքին մասին թէ Քրիստոնեայ Եկեղեցիները պարտին դէպ ի տիեզերական խաղաղութիւն դիմող ներկայ շարժումին առաջնորդութիւնն ստանձնել: Ան, իրրեւ շատ մը երկիրներու իրական կացութեան ուշադիր ու ճշգրիտ դիտող մը, համոզուած է թէ Քրիստոնեայ Եկեղեցիին ապագայ կեանքն իսկ մեծ մասամբ կախեալ է հաւատարիմ այն ընդունելութենէն զոր եկեղեցին պէտք է ընէ Քրիստոսի այն հրամայական պահանջին թէ Իր հետեւողները համաշխարհային եղ-

բայրութեան պատգամը քարոզելու և գործնականացնելու կոչումը ունին : Չորեքշաբթի օրուան ժողովին մէջ ալ Եկեղեցիի՝ արդի կեանքի ուրիշ մէկ Գաշտին մէջ ունեցած պարտականութիւնը շեշտուեցաւ որոշ կերպով : Մր. Սմիթի բացարձակ պարզութեամբ և մարգարէական համարձակութեամբ սորվեցուց թէ Քրիստոնէական Եկեղեցին պէտք է ուղիղ առաջնորդէ այն հսկայ պայքարը, որ հիմա տիեզերապէս կը մղուի բոլոր երկիրներու ճարտարարուեստական և ընկերային կեանքին մէջ : Ան խորունկ համոզմամբ բացատրեց պէտքն Յիսուսի ընկերային սկզբունքներուն ուղղամտօրէն գործնականացման : Քրիստոնեայ Եկեղեցին իր Տէրօջը դաւաճանած ու իր իսկ կեանքն ու կենսունակութիւնը կորսնցուցած պիտի ըլլայ, եթէ անվերապահօրէն չի պատասխանէ այն կոչին որ կ'ըլլայ միջազգային գործերու մէջ տիեզերական խաղաղութեան շարժումը գորացնելու և ճարտարարուեստական աշխարհի մէջ արդարութիւն ընելու համար :

Բերայի Ե. Ք. Ընկերակցութեան զբօսարանի մեծ սրահին մէջ Ամերիկեան Ընդհ. Հիւպատոս Կ. Պ. Բէլլընտալի նախագահութեամբ տեղի ունեցած բանախօսութեամբ մը, ինչպէս նաև Կ. Պոլսոյ Ուսանողական Համագումարին առթիւ Մր. Սմիթի պերճախօսաբար ու շատ ազդու կերպով պախարակեց պատերազմի ոգին, որ դեռ մեր ազնիւ ջանքերէն շատը կը վատնէ և մաքուր արիւններէն շատ կը ծծէ, և ի նպաստ միջազգային խաղաղութեան և բարեկամութեան գորաւոր կոչ մը ըրաւ : Իր խօսքերը մեծ խանդավառութեամբ ընդունուեցան : Եթէ Մր. Սմիթի այցելութեան ժամանակը կարճ եղած չըլլար, կարելի էր նաև տարբեր առիթներով օգտուիլ իրմէ : Սոսեցաւ նաև Ուսանողական Համագումարին բացման նիստին մէջ, որ Չորեքշաբթի իրիկուն տեղի ունեցաւ Բոպէրթ Գոլէճի մէջ, ինչպէս նաև Հինգշաբթի առտու Քոնսթանթինոփրլ Գոլէճին մէջ :

Իբրև Քրիստոնեայ գործիչներ մեր առջև դրուած խնդիրն է կարելի եղածին չափ ընդարձակ սահմանի մէջ զարգացնել մեթոտները, որոնցմով կարելի ըլլայ այս Քրիստոնեայ պատուական անձին պատգամները տարածել : Տարակոյս չունինք թէ Աստուած զինքը կը գործածէր այս կերպով : Կ. Պոլսոյ պէս քաղաքի մը մէջ այսպիսի արժէքաւոր խօսակցութիւններ անտարակոյս կարելի է ունենալ յաճախակի գումարումներով, փոքր խումբերով, և խումբերը մեր տարբեր ազգութիւններէն բաղկացեալ անդամներով որոնք այս սկզբունքներուն իրական արժէքին ու արդարութեան համոզուած ըլլան : Այսպիսի շրջանակներու մէջ կրնանք անվերապահօրէն խորհրդակցիլ այս պատգամին մասին, կրնանք զիրար սրտապնդել հակագործունէութեան և վատութեան դէմ, և հանդարտօրէն ու խաղաղօրէն տարածել այս աւետարանը մեր հասարակութեանց մէջ, այնպէս որ շինիչ գործակցու-

Թեան ունակութիւնը Քրիստոնեայ եկեղեցիներու կողմէն ևս զօրացուի: Ահա այս կերպով կրնանք միջազգային բարեկամութեան և բարեացակամութեան և ճարտարարուեստական և ընկերային շրջանակներու մէջ արդարութեան օրը ծագեցնելու աշխատիլ: Եռանդագին հայցենք Աստուածային օրհնութիւնը մեր բարեկամին Մր. Սմիթհի վրայ, որ նուիրուած ջանքեր կը թափէ Աստուծոյ Թագաւորութեան գալուն համար:

է. ճ. Ֆ.

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԵՒ ՈՒՐԻՇ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ

ՏՐԷՏ Պ. Սմիթհի Յանձնախումբին վերջերս ունեցած մէկ գումարման առթիւ, ուր կարգադրութիւններ կ'ըլլային Մր. Ֆրէտ Պ. Սմիթհի Պոլիս տուած այցելութեան համար, թելադրութիւններ ալ եղան յիշեալին այս քաղաքին մէջ սկսած թանկագին գործը շարունակելու կերպերուն և միջոցներուն մասին: Այս նպատակին համար եռանդամ Յանձնախումբ մըն ալ ընտրուած էր:

Առաջին և բացայայտ պէտքերէն մէկը սա է թէ Մր. Սմիթհի պատգամը՝ կարելի եղածին չափ ընդարձակ շրջանակի մէջ՝ տարածուի մեր տարբեր հասարակութեանց մէջ: Այդ պատգամը կարելի է սապէս ամփոփել. — Քրիստոնէական Եկեղեցիներու գործակցական ջանքերուն միջոցաւ Քրիստոնէական միութեան մեծ սկզբունքը զարգացնելու հրամայական պէտք մը կայ, այնպէս որ այդ կերպով Քրիստոնէական Եկեղեցին կարենայ գրաւել իր պատշաճ տեղը դէպի միջազգային խաղաղութիւն շարժումին առաջնորդութեան մէջ, ինչպէս նաև ան յաջողի իր այս առաջնորդութիւնը զգալի ընել այն ծաւալուն պայքարին մէջ, որ այժմ կը մղուի բոլոր երկիրներուն ճարտարարուեստական ու ընկերային կեանքին մէջ:

Ժամանակները ճշդապահ գործունէութիւն կը պահանջեն: Ամենաստիպողական պէտքերէն մէկն է միջազգային յարաբերութեանց մէջ բարեկամութեան և բարեացակամութեան աւելի իրական և յօժար ոգի մը: Եթէ Քրիստոնեայ Եկեղեցին իր Տէրը չի մասնէ, և իր իսկ կեանքը կորսնցնելու վտանգին չենթարկուի, միջազգային գործերու մէջ տիեզերական խաղաղութեան շարժումը անկեղծօրէն վարելու և ճարտարարուեստական աշխարհին մէջ արդարութիւն ընելու համար բարձրացուած հարկեցուցիչ կոչը անկարևոր չպիտի նկատուի:

Քրիստոնեայ այրերու և կիներու մէջ իրրև առաջնորդող մը՝ ջերմապէս կը խնդրուի ձեզմէ որ հաճիք գործածել Ձեր թէ՛ պաշտօնական և թէ՛ անձնական ազդեցութիւնը՝ կարելի եղածին չափ շատ գումարումներու և հաւաքոյթներու առջև ազդուօրէն ներկայացնելու համար միջազգային խաղաղութեան և արդարութեան այս խնդիրը: Քարոզիչն

իր ամպիոնէն, հասարակութեան և ընկերային կազմակերպութեանց առաջնորդները իրենց բեմերէն և առեւտրականը իր հրապարակէն, բոլորը, իրենց խօսքով ու գործով, թող Աստուծոյ շնորհքով գործիքներ ըլլան այս մեծ օգտակարութեան, ճշմարիտ խաղաղութեան և արդարութեան օրուան ծագելուն համար:

Ձեր եռանդագին գործակցութիւնը այս խնդրոյն մէջ պիտի գնահատուի ջերմապէս: Կը թելադրուի որ Յունիսի 25ին, բոլոր հոգևոր պաշտօնեաներ և ուրիշներ, որոնք պատեհութիւն ունին Քրիստոնէական պատգամը ներկայացնելու, այս խնդիրն առնեն իբրև իրենց քարոզներուն և բանախօսութեանց նիւթ և իրենց ժողովուրդներուն և ունկնդիրներուն վրայ տպաւորեն Համաշխարհային Եղբայրութեան և Տիեզերական Խաղաղութեան համար Քրիստոնէական միացեալ ջանքերու գերագոյն կարեւորութիւնը:

Տերոջ գործին մէջ
Եղբայրական զգացումներով
Ձերդ

Եռանդամ Յաննախումբ
Է. ճ. ՖիՇԸԲ Ա.Տիւնայեկ
Հեւրի Հ. ԲԻԿԶ
Ա. Մ. ՊԸԲՃԸՍ

30 Մայիս 1922
Կ. Պոլիս

ՅՈՒՆԻՍԻ ՀԱՄԱՐ ՍԲ. ԳԻՐՔԷՆ ՀԱՄԱՐՆԵՐ

<u>Քրիստոսի Խաղաղութիւնը</u>			<u>Քրիստոնէական Ընկերակցութիւն</u>		
Յունիս 4	Յովն.	ԺԳ. 27	Յունիս 11	Ա. Կոր.	ԺԲ. 12, 13
" 5	Ա Յովն.	Բ. 17	" 12	Ա Յովն.	Ա. 3
" 6	Ղուկ.	Ժ. 41, 42	" 13	Փիլիպ.	Ա. 5
" 7	Յովն.	ԺԶ. 33	" 14	Ա. Կոր.	Ա. 9
" 8	Բ Թես.	Գ. 16	" 15	Ա Յովն.	Ա. 7
" 9	Սաղ.	ԼԹ. 6	" 16	Յովն.	ԺԷ. 20, 21
" 10	Թուոց	Զ. 24-26	" 17	Գործք.	Բ. 44-47
<u>Քրիստոնէական Ազատութիւն</u>			<u>Քրիստոնէական Ծառայութիւն</u>		
Յունիս 18	Գաղ.	Ե. 1, 13	Յունիս 25	Մատ.	Ժ. 25
" 19	Հորվ.	Զ. 22	" 26	Ես.	ԾԳ. 3
" 20	Յովն.	ԺԵ. 15	" 27	Սաղ.	ԿԹ. 20
" 21	Մատ.	ԺԱ. 29, 30	" 28	Բ Տիմ.	Դ. 16
" 22	Յովն.	ԺԲ. 26	" 29	Եբր.	ԺԳ. 14
" 23	Փիլ.	Գ. 7	" 30	Մատ.	Ը. 20
" 24	Յովն.	ԺԲ. 26	Յուլիս 1	Եբր.	ԺԲ. 1, 2

ԱՂՕԹՔ

Ա ՂՕԹՔԸ առանձնաշնորհում մըն է . բայց մենք ինչո՞ւ համար չենք կրնար ըմբռնել ասոր իմաստը . որովհետև աղօթքը մեզի համար ունէ ատեն և ունէ տեղ կարելի է : Աղօթքին դուռը սովէն ատեն բաց է , ասոր համար է որ անիկա մեզի համար . հասարակ բան մը դարձած է : Լոնտոնի մէջ շատեր կան որոնք տակաւին Ուէսթմինսթրի Եկեղեցիին ներսը տեսած չեն , որովհետև ունէ ատեն զանիկա տեսնելու կարելիութիւնը ունեցած են : Օսթին Ֆիլիփս կ'ըսէ . « Հոովմի Սբ . Պետրոս Եկեղեցիին դաւիթին մէջ մուտք մը կայ որ պատով մը դոցուած է , և խաչով մըն ալ կնքուած : Այս մուտքը քսանըհինգ տարին անգամ մը միայն կրնայ բացուիլ : Քառորդ դարն անգամ մը , Պապը , իշխանավայել կերպով , իր կարգինալներով չըջապատուած , կը մօտենայ մուտքին , և կ'սկսի անոր քանդումի գործողութիւնը՝ երեք անգամ անոր զարնելով արծաթէ մուրճով մը : Երբ անցքը կը բացուի , բաղմութիւնը դէպ ի կաթուղիկէի մեծ խորանը կը յառաջանայ այնպիսի ճանապարհէ մը զոր անոնց մեծամասնութիւնը մինչև այն ատեն տեսած չեն , և թերևս տակէ վերջն ալ կրկին տեսնելու պատենութիւնը չի պիտի ունենան : Երևակայեցէք որ «Շնորհաց Փահն ալ Բորթա Մակնայի պէս մեզի անմատչելի ըլլար բաց ի քառորդ դարն անգամէ մը . Ենթադրեցէք որ հիմա շատերս տասը տարիէ ի վեր միայն անգամ մը աղօթած ըլլայինք , և թէ դեռ տասներհինգ տարիներ սպասելու պէտք ունենայինք անգամ մը ևս մօտենալու համար մեր Աստուծոյն , և թէ մեր կեանքին ամբողջ շրջանին միայն երկու երեք անգամ աղօթելու արտօնութիւն ունեցած ըլլայինք , ինչ անձկութեամբ պիտի սպասէինք այդ Սուրբ Օրուան մօտենալուն : » Կրնայ ըլլալ որ մենք կեանքի մեծ առանձնաշնորհումներէն կը զրկուինք պարզապէս անոր համար որ ատոնք մեզի համար հասարակ բաներ դարձած են , ինչպէս աղօթքը :

Հ . Ի . ՔՈՍԴԻՔ

Ով Տէր , զիս զգայուն պահէ այն շնորհաց հանդէպ , որոնք միշտ իմ շուրջս են : Որպէս զի չըլլայ որ անոնք ինձի մօտ ըլլալուն համար զանոնք լքելու փորձութեան մէջ իյնամ : Ես , քու բարութիւնդ ամենօրեայ հացիս մէջ տեսնեմ , և իմ տանս հանգիստը իմ խորհուրդներս Աստուծոյ ողորմութեան աթոռը առաջնորդէ :

Ճ . Հ . ՃՕՎԷԹ



ԱՂՕԹՔԻ ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔՍ պէտք է աւելի հաւատք ունենանք աղօթքի վրայ, մանաւանդ միարանական յարատե աղօթքի՝ զոր կը մատուցանեն միևնոյն նպատակի շուրջ բոլորած անձինք: Հոգեւոր առատ օրհնութեանց շնորհուելուն իբրև պայման դրուած է այս՝ Աստուծոյ Խօսքին մէջ:

Պօղոս առաքեալ կը պատուիրէ. «Արդ կ'աղաչեմ ամէն բանէ առաջ աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամէն մարդոց համար:»

Բարեխօսական աղօթքը, այսինքն՝ աղաչանք մեր անձնականէն դուրս նպատակի մը համար, խիստ կարևոր է և օգտակար:

Այսպիսի աղօթքներու իբր պատասխան է որ Աստուած պիտի շնորհէ խաղաղութեան ժամանակներ, որպէս զի մարդիկ կարենան «հանդարտ կեանք վարել բոլորովին աստուածպաշտութիւնով ու պարկեշտութիւնով:»

Ուրիշներու համար աղօթել «աղէկ է և ընդունելի՝ մեր Փրկիչ Աստուծոյն առջև,» ու բոլորովին համաձայն՝ սուրբ և բարերար կամքին Անոր, «որ կ'ուզէ որ ամէն մարդիկ փրկուին և ճշմարտութիւնը ճանչնալու գան:» Այսպիսի բարեխօսական աղօթք ընելը կը նշանակէ գործակցիլ նաև Յիսուս Քրիստոսի, մեր միակ Միջնորդին և Քահանայապետին:

Մերձաւոր Արեւելքի, եթէ ոչ նոյն իսկ համայն Եւրոպայի, խաղաղութիւնն ու կանոնաւոր զարգացումը կախում ունին այս հսկայ քաղաքի բարոյական ու հոգեւոր վիճակէն: Ազգերու և երկիրներու բախտը հոս կոանուելու վրայ է: Ուստի մեծ տարբերութիւն կ'ընէ այս խիստ կարևոր կեդրոնիս մէջ գործօն հոգեւոր կեանքի մը արծարծումը, և արդարութեան ու ընկերսիրութեան հոգւոյ ծաւալումը: Ուրեմն աղօթակից ու աշխատակից եզիր դուն ալ այս քաղաքին հոգեւոր փրկութեան համար:

Հայ ազգին ապագային համար ալ բախտորոշ ազդեցութիւն ունի կ. Պոլսոյ Հայութեան բարոյական ու հոգեւոր տեսակէտէ ինչ տեսակ նկարագիր ունենալը: Աղօթէ Հայ ազգի մնացորդին հոգեւոր վերակենդանութեան համար:

Աղօթէ նաև քու հարեւաններուդ՝ համար: Հիւանդ, վիրաւոր ու արկածեալ Յօր, երբ կ'աղօթէր իր ընկերներուն համար, Աստուած զայն իր «գերութենէն ազատեց:»

Ե. Ս. Ք.



“ՈՐՊԷՍ ԶԻ ԱՄԷՆՆ ԱԼ ՄԷԿ ԸԼԼԱՆ”

«ՄԻԱԲԱՆԱԿԱՆ Ազօթք»ի այս թիւը Հայերէն կը հրատարակուի, վասն զի գիտենք թէ Անգղիերէն լեզուի անտեղեակ Հայախօս շատ բարեկամներ կան, որոնք խորին ու հարազատ համակրանք ունին Կ. Պոլսոյ Քրիստոնեայ Գործիչներու Միութեան գաղափարականներուն ու նպատակներուն հանդէպ: Քրիստոսով և Քրիստոնէական ծառայութեան մէջ գործակցութիւնը կը յաղթէ ամէն տեսակ խոչընդոտներու: Կ. Պոլսոյ մէջ հաւատքի և լաւատեսութեան մեծ գրգիռ մը սա իրողութիւնն է թէ անդադար երևան կու գան այնպիսիներ որոնք, լեզուի և ազգայնութեան տարբերութիւններու հակառակ, մարդկային բարօրութեան և հոգևոր յառաջդիմութեան Քրիստոնէական ամենաբարձր գաղափարականները կը տածեն և եռանդագին կը բաղձան իրենց պատականութիւնը կատարել Քրիստոնեայ ընկերութեան նպատակն ի գլուխ հանելու համար:

Հ Ր Ա Ի Է Ր

Եթէ կը հաւատաք ազօթքի գօրութեան, կը հրաւիրենք ձեզ միանալ մեր ազօթքի ընկերակցութեան: Մեր նպատակն է անհատական և ընկերային կեանքի այն խաղաղ փոխակերպումը, որ միայն Ար. Հոգւոյն ձեռամբ կրնայ գործուիլ: Միաբանական ազօթքի համար հաւաքուող փոքր խմբակներ կը կազմուին մայրաքաղաքիս այլևայլ կողմերը: Դուք ալ կը հրաւիրուիք այդպիսի խումբ մը կազմել կամ արդէն իսկ կազմուած խմբակի մը միանալ: Եթէ կը փափաքիք այս ընկերակցութեան անդամակցիլ, հաճեցէք մեզի իմացնել, և մենք ձեզի պատահութիւն պիտի ընծայենք նոյն նպատակն հետապնդող ուրիշներու հետ աշխատակցելու: «Զօրութեամբ չէ, և ուժով չէ, հապաիմ Հոգւովս, կ'ըսէ զօրաց Տէրը:»

Կ. ՊՈԼՍՈՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Քաղուածներ Կազմական Կանոնագրեմ.

«Կ. Պոլսոյ Քրիստ. Գործիչներու Միութիւնը կամաւոր ընկերակցութիւն մըն է մայրաքաղաքիս մէջ ունէ ձևով Քրիստոնէական գործի պարապող անձերու:»

«Միութեանս նպատակն է զարգացնել ազօթքի և Քրիստ. նկարագրի աճման մէջ գործակցութիւն, և ջանքի ու ծառայութեան մէջ միաբանութիւն:»

«Ունէ անձ որ փափաք յայտնէ գործակցիլ այս միութեան, ստորագրելով անոր Կազմ. Կանոնագիրը և վճարելով տարեկան տուրքը, Միութեան անդամ կ'ըլլայ:»